ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2015- 08.07/346
08.07.2015 թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Գևորգ Կոստանյանին

Պատճենը՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ
Վահրամ Շահինյանին

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

2015թ. հուլիսի 6-ին ժամը 12:30-ին ՀՀ ոստիկանության աշխատակիցները բերման են ենթարկել էլեկտրաէներգիայի թանկացման դեմ խաղաղ նստացույց իրականացնող ցուցարարներին: Իրականացված գործողությունների արդյունքում ցույցի մասնակիցները ենթարկվել են բռնությունների և անմարդկային վերաբերմունքի:

Լրատվական միջոցներով հրապարակված նյութերի համաձայն[1] ոստիկանության աշխատակիցների կողմից բերման ենթարկված ցույցի մասանիցներից Դավիթ Սանասարյանի նկատմամբ բռնություն է գործադրվել:

Դավիթ Սանասարյանը www.aravot.am –ին տված հարցազրույցում նշում է. «Իմ նկատմամբ եղել է բռնություն ոստիկանական մեքենայի մեջ: Մի քիչ թույլ եմ հիմա ուղղակի: Գլխիս հարված եմ ստացել»: Բերման ենթարկելու ժամանակ կիրառված բռնությունների հետևանքով ոստիկանության Արաբկիրի բաժնում գտնվելու ժամանակ Դ. Սանասարյանի ինքնազգացողությունը վատացել է, շտապօգնություն են կանչել, որն էլ Դ. Սանասարյանին տեղափոխել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն[2]:

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով Ձեր լիազորություններով՝ դիմում եմ Ձեզ՝ ձեռնարկելու անհրաժեշտ միջոցներ սույն հաղորդմամբ նշված փաստերը պարզելու, քրեական գործ հարուցելու, մեղավորներին բացահայտելու և հանցանք կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

1http://iravaban.net/94073.html
http://www.aravot.am/2015/07/06/590759/
[2] http://iravaban.net/94073.html

Կից ներկայացնում եմ՝

1. http://iravaban.net կայքէջում հրապարակված Ոստիկանները բռնություններ են գործադրել Դավիթ Սանասարյանի հանդեպ. վերջինս տեղափոխվել է հիվանդանոց (լրացված) վերնագրով նյութը,
2. www.aravot.am կայքէջում հրապարակված Դավիթ Սանասարյանի գլխին ոստիկանական մեքենայում հարվածել են. (Ֆոտոշարք) վերնագրով նյութը,
3. www.aravot.am կայքէջում հրապարակված՝ «Արաբկիրի ոստիկանությունում տարբեր վնասվածքներով անչափահաս ցուցարարներ կան (ֆոտոշարք)» վերնագրով նյութը:

Հարգանքով

կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Չատինյան
achatinyan@hcav.am
հեռ.՝ 094042268

Արավոտ (http://www.aravot.am)

20:45 | Հուլիս 6 2015

Դավիթ Սանասարյանի գլխին ոստիկանական մեքենայում հարվածել են. (Ֆոտոշարք) (http://www.aravot.am/2015/07/06/590759/)



«Իմ նկատմամբ եղել է բռնություն ոստիկանական մեքենայի մեջ: Մի քիչ թույլ եմ հիմա ուղղակի: Գլխիս հարված եմ ստացել»,- այս մասին լրագրողների հետ զրույցում ասաց Երեւանի ավագանու «Բարեւ Երեւան» խմբակցության անդամ Դավիթ Սանասարյանը:

Նա նշեց, որ դեռ չի որոշել՝ իր նկատմամբ կիրառված բռնությունների առնչությամբ քայլեր ձեռնարկվելու են, թե ոչ:

Անդրադառնալով իր հայտարարած հացադուլին (http://www.aravot.am/2015/07/06/590752/) պարոն Սանասարյանն ասաց, որ Ազատության հրապարակում է անելու հացադուլը: «Սա միայն իմ խնդիրը չի: Բոլորի խնդիրն է: Միայն տանը նստելով չի: 5 քայլ այն կողմ կարող եք տեսնել՝ ինչ անհոգ են մարդիկ»:

Նա չգիտի դեռ, թե ինչքան կտեւի հացադուլը:

Դավիթ Սանասարյանն ի պատասխան այն հարցի, թե ինչո՞ւ ոստիկանության կողմից իրականացված նախորդ բռնություններից հետո ժողովուրդը 3 անգամ ավելի շատ էր, իսկ այս անգամ ոչ, ասաց, որ չգիտի:



(http://www.aravot.am/wp-content/uploads/2015/07/IMG_3850.gif)

(http://www.aravot.am/wp-content/uploads/2015/07/IMG_3847.gif)

(http://www.aravot.am/wp-content/uploads/2015/07/IMG_3847.gif)



(http://www.aravot.am/wp-content/uploads/2015/07/IMG_3848.gif)

Աշոտ ԻՍՐԱԵԼՅԱՆ

Համաձայն «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» օրենքի՝ լրատվական նյութերից քաղվածքների վերարտադրումը չպետք է բացահայտի լրատվական նյութի էական մասը: Կայքում լրատվական նյութերից քաղվածքներ վերարտադրելիս քաղվածքի վերնագրում լրատվական միջոցի անվանման նշումը պարտադիր է, նաեւ պարտադիր է կայքի ակտիվ հղումի տեղադրումը:

Հեղինակ

Աշոտ ԻՍՐԱԵԼՅԱՆ

(http://www.aravot.am/author/ashotisraelyan/)

ՆՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Դավիթ Սանասարյանը հացադուլ հայտարարեց

Դավիթ Սանասարյանը համաձայն է աղբամանները փոխարինել ավազի պարկերով (տեսանյութ)

Դավիթ Սանասարյանին ոստիկանությունից հիվանդանոց են տեղափոխել

Անահիտ Բախշյան. «Չեմ կարծում, որ այս աղբամաններն այստեղ պետք է պատանդ մնան» (տեսանյութ)

Նորություններ

2015-07-06 18:00:57

Քաղաքացին փաթեթը ցանկանում էր նետել քրեակատարողական հիմնարկի բնակելի գոտի (http://iravaban.net/94089.html)

2015-07-06 17:35:07

Հատուկ ծառայություն իրականացնողը յուրացրել է կալանավորի խոշոր չափերի գույքը (http://iravaban.net/94093.html)

2015-07-06 17:13:37

Ոստիկանները բռնություններ են գործադրել Դավիթ Սանասարյանի հանդեպ. վերջինս տեղափոխվել է հիվանդանոց (լրացված) (http://iravaban.net/94073.html)

2015-07-06 17:05:27

Պետությունից հափշտակվել է 115 մլն դրամ. ամբաստանյալը բարձրաստիճան պաշտոնյաների է մեղադրում կատարվածի մեջ (http://iravaban.net/94076.html)

2015-07-06 16:41:35

Երևանում հանրահավաք է նախատեսվում (http://iravaban.net/94070.html)

2015-07-06 16:16:37

Նոր Արեշում կրակոցներ են հնչել. մեկ զոհ կա (http://iravaban.net/94068.html)

2015-07-06 15:55:52

Սուրիկ Խաչատրյանի սպանության փորձի գործով 4 անձ կալանավորվել է. ԱԱԾ (http://iravaban.net/94064.html)

Ոստիկանները բռնություններ են գործադրել Դավիթ Սանասարյանի հանդեպ. վերջինս տեղափոխվել է հիվանդանոց (լրացված)

2015-07-6 / 17 13



Էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ բողոքի ցույցերի համակարգողներից Դավիթ Սանասարյանն (նա նաև «Ժառանգություն» կուսակցության անդամ է և Երևանի ավագանում անդամ) էլ ժամեր առաջ ոստիկանների կողմից բերման է ենթարկվել ոստիկանության Արաբկիրի բաժին, որտեղ ինքնազգացողությունը վատացել է և արագ

տեղափոխել են «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն. այս մասին **Իրավաբան.net (http://iravaban.net/)**-ին հայտնեց քաղաքական վերլուծաբան Ստյոպա Սաֆարյանը:

Լաս. Դավիթի ծնողների և իրավապաշտպանների հետ այս պահին գտնվում է հիվանդանոցում և ասաց, որ թեև Դավիթի

Սա, Դավիթի ծանոթները և հարազատները հստակ այս պահին գտնվում է հիվանդանոցում և ասաց, որ թեմա Դավիթի մասին վրա կան բռնության հետքեր, սակայն լուրջ խնդիրներ չեն հայտնաբերվել: Նշենք, որ տեղեկություն էր տարածվել, թե Դավիթը ուղեղի ցնցում է ստացել: Ս. Սաֆարյանն ասաց, որ իրեն հայտնի չէ, որ նման բան արձնագարած լինեն բժիշկները: սակայն ասաց նաև, որ Դավիթի ինքնազգացողության վատանալու պատճառը թերևս ոստիկանների կողմից բռնություններն են.

«Ինչպես նկարագրում են նրա հետ ոստիկանական մեքենայում եղած անձիք, մինչև բաժանմունք տեղափոխելը բռնություններ են կիրառվել բոլորի նկատմամբ»,- ասաց նա: Իսկ մեր այն հարցին, թե արդյո՞ք Դավիթի ինքնազգացողությունը թույլ կտա, որպեսզի այսօրվա հանրահավքին մասնակցելու, Ստյոա Սաֆարյանն ասաց, թե առաջիկա ժամերը ցույց կտան: Այժմ պատրաստվում են հիվանդանոցից դուրս գալուց հետո տուն գնալ:

17:45

Քիչ առաջ Դավիթ Սանասարյանն իր ֆեյսբուքյան էջում գրել է, որ առողջական վիճակը լավ է և պատրաստվում է ժամը 19-ին գնալ «Ազատության» հրապարակ:

Իրավաբան.net (http://iravaban.net/)

Դիտվել է՝ **248** 169 g+1 Порекомендовать Հավանել 5 Tweet 1 () 4



Հատուկ ծառայություն իրավանսգնող յուրացրել է կալանավորի խոշոր չափերի գումար (http://iravaban.net/94093.html)



Վրաերթ Գյումրիում. տղամարդը մահացել է (http://iravaban.net/94042.html)

Բաղրամյան պողոտայից բերման է ենթարկվել 46 մարդ՝ այդ թվում անչափահասներ (http://iravaban.net/94028.html)



Արա Բուդաղյանի կալանավորումը անհիմն է եղել (http://iravaban.net/93954.html)

Ոստիկանին ազատել են աքիսատանքից՝ ակտիվիստի հետ խոսով խոսելու համար. Վատինակ Շուշանյան (http://iravaban.net/93957.html)

ԻՐԱՎԱԲԱՆ TV (HTTP://IRAVABAN.NET/CATEGORY/VIDEO)

- Իրավական շաբաթ (http://iravaban.net/category/video/law-week)
- Դատական գործեր (http://iravaban.net/category/video/court-cases)
- Իրազեկ քաղաքացի (http://iravaban.net/category/video/citizen-tv)
- «Իրավունքի ուժը» (http://iravaban.net/category/video/law-force-tv-program)
- Տեսահարցումներ (http://iravaban.net/category/video/video-quiz)
- Իրավաբան TV այլ (http://iravaban.net/category/video/iravaban-tv-others)

Ինչպես են ոստիկանները ազատում Բաղրամյան պողոտան (http://iravaban.net/93989.html)

Աուդիտ ՀԷՑ-ում և ուժի կիրառման վտանգ՝ Բաղրամյան պողոտայում (http://iravaban.net/93765.html)



Ո՞րն է շտապ հավաքը եվ դրա անցկացման կարգը (http://iravaban.net/93395.html)



Առաքին կադրերը ծննդատան կրակոցներից (http://iravaban.net/93132.html)

ՖՈՏՈՇԱՐՔ (HTTP://IRAVABAN.NET/CATEGORY/PHOTOGALLERY/PHOTO-STORY)

ՖՈՏՈՌԵՊՈՐՏԱԺ (HTTP://IRAVABAN.NET/CATEGORY/PHOTOGALLERY/PHOTOREPORT

Արավոտ (http://www.aravot.am)

15:49 | Հուլիս 6 2015

Արաբկիրի ոստիկանությունում տարբեր վնասվածքներով անչափահաս ցուցարարներ կան (ֆոտոշարք) (http://www.aravot.am/2015/07/06/590581/)

Արաբկիրի ոստիկանության բաժնից ազատ են արձակվել 5 անչափահաս ցուցարարներ: Նրանցից 3-ը իրենց մարմնի տարբեր հատվածներում ունեն մարմնական տարբեր վնասվածքներ՝ կապտուկներ, քերծվածքներ եւ ուռածություն:

Նրանք բոլորն էլ պատմում են, որ այդ վնասվածքները ստացել են այսօր Բաղրամյան պողոտայից բերման ենթարկվելու ճանապարհին:

Մանրամասները՝ լուսանկարներում:

Առցանց Ստատուսի լուսանկար facebook-ում բաժանորդագրվելու համար սեղմեք

(http://www.aravot.am/wp-content/uploads/2015/07/cucararneri-vnasvacqner-5.jpg)



(http://www.aravot.am/wp-content/uploads/2015/07/cucararneri-vnasvacqner-4.jpg)



(http://www.aravot.am/wp-content/uploads/2015/07/cucararneri-vnasvacqner-3.jpg)



(http://www.aravot.am/wp-content/uploads/2015/07/cucararneri-vnasvacqner-2.jpg)

(http://www.aravot.am/wp-content/uploads/2015/07/cucararneri-vnasvacqner-1.jpg)

Արփինե ՍԻՄՈՆՅԱՆ

Համաձայն «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» օրենքի՝ լրատվական նյութերից քաղվածքների վերարտադրումը չպետք է բացահայտի լրատվական նյութի էական մասը: Կայքում լրատվական նյութերից քաղվածքներ վերարտադրելիս քաղվածքի վերնագրում լրատվական միջոցի անվանման նշումը պարտադիր է, նաեւ պարտադիր է կայքի ակտիվ հղումի տեղադրումը:

Հեղինակ Լրագրող
Արփինե ՍԻՄՈՆՅԱՆ
(http://www.aravot.am/author/arpine/)

ՆՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Ոստիկանական մեքենայում անչափահասի են ծեծել
(http://www.aravot.am/2015/07/06/590553/)

Ստեփան Սաֆարյան. «Ունենք տակավին ճգնաժամի մեջ գտնվող շարժում»

Բերանի կարերը քանդելուց հետո ցուցարարը հացադուլ է սկսել (Տեսանյութ)

Բաղրամյան պողոտա, թիվ ««...»» (պատմվածք)